ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 09.06.01-17

Ք. Երևան « 27» հունվար 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կրթության զարգացման նորարարական ազգային կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Արտաշես Թորոսյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1192 .Կրթության որակի ապահովում» ծրագրի «11001. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **199 405 400** (մեկ հարյուր իննսունինը միլիոն չորս հարյուր հինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն

պայմանագրի 5.4 կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.8. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կազմակերպությունից ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1 կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.4. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.8. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.9. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.10. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.12. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 22-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո,

2.4.13. պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում համապատասխան չափով գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ սույն պայմանագրի 2.4. կետում նշված հաշվետվությունն ընդունելուց հետո:

3.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը վճարվում է կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպությանկողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից,

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Կրթության զարգացման նորարարական ազգային կենտրոն»հիմնադրամ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	ք. Երևան, Տիգրան Մեծ 67
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011005429	Հ/Հ 220303210078000
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02657678
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Գործադիր տնօրենի ժ/պ՝
_____ Վ. Գասպարյան	Digitally signed by TOROSYAN ARTASHES 1209620243 Date: 2023.01.26 17:35:33 AMT _____ Ա.Թորոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S	Կ.S.

Հավելված
2023 թ. հունվարի 27-ին
կնքված N 09.06.01-17 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«1192 .Կրթության որակի ապահովում» ծրագրի «11001. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» միջոցառման

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	ՄԿՈՒ համակարգում իրականացվող բարեփոխումների հրապարակայնության և տեսանելիության ապահովում՝ սոցիալական գործընկերների, տեղական և միջազգային կազմակերպությունների և ՄԿՈՒ այլ շահառուների համար:	Շահագրգիռ կողմերը տեղեկացված են ՄԿՈՒ համակարգում ընթացող բարեփոխումների արդյունքների մասին	Նախապատրաստել և հրատարակել <<Մասնագիտական կրթություն և ուսուցում>> հանդեսը	Հրատարակված է <<Մասնագիտական կրթություն և ուսուցում>> հանդեսի 2023 թվականի 1-2 համարները (1 միավոր): Հանդեսի համարների բաշխումը սկսված է:	1.Ամսագրի նյութերի նախապատրաս-տում՝ հոկտեմբեր 2. Ամսագրի տպագրություն՝ դեկտեմբեր	1870,0
2	ՄԿՈՒ քաղաքականության և ռազ-մավարության վերաբերյալ հետազոտական կամ փորձարարական ծրագրերի իրականացում, հայեցակարգային փաստաթղթերի, նորմատիվ և	ՄԿՈՒ քաղաքակա-նության և ռազմավա-րության վերաբերյալ իրականացնել հետա-զոտական և փորձա-րարական ծրագրեր, մշակել հայեցակար-գային փաստաթղթե-րի, նորմատիվ և իրավական ակտերի նախագծեր	Ընտրված բնագավառում վերլուծել փաստացի վիճակը, բացահայտել խնդրահարույց հարցերը, առաջարկել հիմնավորված լուծումներ, ներկայացնել համապատասխան փաստաթղթերի նախագծեր	Կատարվել է 4 միավոր աշխատանք՝ համաձայնեցված և ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված թեմաներով: Կատարված աշխատանքները գնահատվում են դրանց գործնական կիրառման վերաբերյալ փորձագիտական եզրակացության հիման վրա:	տարվա ընթացքում՝ փուլերով, աշխատանքների ավարտ՝ դեկտեմբեր	4560,0

	իրավական ակտերի նախագծերի մշակում, վերանայում					
3	ՄԿՈՒ բարեփոխումների արդյունքների գնահատում	Ընտրված ուսումնա-կան հաստատություն- ներում ըստ իրակա-նացվող բարեփո-խումների ուղղություն-ների բացահայտել իրական ձեռքբերում-ները՝ կապելով ՄԿՈՒ խնդիրների և առաքելության հետ	Բացահայտել բարեփո-խումների յուրաքանչյուր ուղղության ընկալման հիմնավորվածությունը, կատարված քայլերի անհրաժեշտությունը, դրանց նախապատ-րաստման և իրականաց-ման գործողությունների արդյունավետությունը, այն գնահատելու համար ընտրված ֆինանսական և ոչ ֆինանսական ցու-ցանիշների հիմնավոր-վածությունը: Ընտրել գնահատման չափելի ցուցանիշների կազմ, հիմնավորված մեթոդա-բանություն, արդյունքնե-րի արտացոլման ընդու-նելի ձևաթղթեր, եզրա-հանգումներ կատարելու օբյեկտիվ մոտեցումներ: Կատարել ընդհանրա-ցումներ, եզրակացու-թյուններ և առաջար-կություններ:	ՄԿՈՒ բարեփոխումների արդյունքների գնահատում 10 ուսումնական հաստատություններում: Կատարված գնահատումները պետք է հստակ արտացոլեն ձեռք բերված արդյունքները, դրանց գործնական կարևորությունը, բարեփոխումների հետագա խորացման ուղղությունները, խանգարող գործոնները, դրանց հաղթահարման առաջարկները, դրական ձեռքբերումը այլ հաստատություններում կիրառելուն նպաստող առաջարկություններ:	հուլիս	3800,0
4	<<Աշխարհի հմտություններ>> միջազգային կազմակերպությա նը Հայաստանի անդամակցության և դրանից բխող գործընթացների կազմակերպում	<<Աշխարհի հմտություններ>> միջազգային կազմակերպության անդամավճարի մուծում, Հայաստանի պաշտոնական պատվիրակի մասնակցություն <<Աշխարհի հմտություններ>> միջազգային կազմակերպության ամենամյա գագաթաժողովին	1. Անդամավճարի տարեկան գումարի ճշտում և համապատասխան հաշվեհամարին փոխանցում: 2. Հայաստանի պաշտոնական պատվիրակի գագաթաժողովին մասնակցության փաթեթի ձեռք բերում և գործուղման կազմակերպում	1.Մուծված է 2023 թվականի տարեկան անդամավճարը: Առկա է փոխանցման անդորրագիրը: 2. Հայաստանի պաշտոնական պատվիրակը մասնակցել է <<Աշխարհի հմտություններ>> միջազգային կազմակերպության ամենամյա գագաթաժողովին	1. մարտ 2.սեպտեմբեր	5300,0
5	ՄԿՈՒ որակավորման կարողու-թենամետ չափորոշիչների և	Հաստատված ձևաչափով մշակել ՄԿՈՒ մասնագի-տությունների և որակավորումների	Գործատուների ներկա-յացուցիչների հետ վեր-լուծել տվյալ զբաղմունքը, բացահայտել տվյալ որա-կավորմամբ մասնագե-տի պարտականություն-ները, նրան ներկայաց-վող ընդհանուր և մաս-նագիտական	Մշակված է ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ՄԿՈՒ 8 մասնագիտությունների և որակավորումների համար	հուլիս	20064,0

	գնա-հատման չափանիշների մշակում	համար պետական կրթական չափորոշիչ, մասնագիտության բնութագիր և մասնագետի գնահատման չափանիշներ	պահանջ-ները, ձևավորել մասնա-գիտության բնութագիրը, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլ-ների ցանկը, յուրաքան-չյուր մոդուլի ուսումնա-ռության արդյունքները և կատարման չափանիշնե-րը, ձևավորել ժամանա-կի բյուջեն ուսումնառու-թյան ամբողջ տևողու-թյան համար, ընտրել առանցքային հմտու-թյունները: Կազմել ՊԿՉ նախագիծը՝ ներառելով նաև ընդհանուր հումա-նիտար և սոցիալ տնտե-սագիտական առարկա-ները: Ձևավորել մասնա-գետի գնահատման չափանիշները:	պետական կրթական չափորոշիչներ, մասնագիտության բնութագրեր և մասնագետի գնահատման չափանիշներ: Այս փաստաթղթերի վերաբերյալ առկա է ՄԿՈՒՀԱԿ-ի դրական տեխնիկական փորձաքննության և համապատասխան ոլորտային հանձնաժողովի դրական բովանդակային փորձաքննության եզրակացությունները: Փաստաթղթերը մշակված են հաստատված ձևաչափերով:		
6	Կարողութենամետ չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլանների և մոդուլային ուսումնական ծրագրերի մշակում	Հաստատված ձևաչափերով մշակել համապատասխան մասնագիտություն-ների և որակավորումների ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր	Վերլուծել տվյալ մասնա-գիտության պետական կրթական չափորոշիչը, բացահայտել ուսումնա-կան ծրագրերում ներառվող հարցերի շրջանակը, մոդուլների յուրաքանչյուր ուսումնա-ռության արդյունքի հա-մար մշակել գնահատման միջոց, որում պետք է նե-րառվի նաև տվյալ արդ-յունքի ուսուցման ծրա-գրային մանրամասները և առաջարկվի դրականի անցումային շեմը: Յուրա-քանչյուր արդյունքի հա-մար պետք է առաջարկվի նաև ուսուցման մեթոդա-բանությունը, պահանջվող ռեսուրսները, ինչպես նաև տվյալ արդյունքին հատ-կացվող տեսական և գործնական ուսուցման ժամերը: Մշակվում է նաև ուսումնական գործընթա-ցի ժամանակացույցը՝ ըստ ուսումնական կիսամյակ-ների, կատարվում է պրակտիկաների տևողու-թյան բաշխում ըստ պրակտիկաների տեսակ-ների և ուսումնական կիսամյակների: Առաջարկվում է պետա-կան ամփոփիչ ատեստա-վորման ձևը և ընդգրկվող նյութի ծավալը:	Մշակված է ՄԿՈՒ 8 մասնագիտությունների և որակավորումների համար հաստատված ՊԿՉ-ներին համապատասխան ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր: Դրանց վերաբերյալ առկա է ՄԿՈՒՀԱԿ-ի դրական փորձագիտական եզրակացությունը: Մշակված փաստաթղթերը համապատասխանում են հաստատված ձևաչափին:	սեպտեմբեր	10640,0
7	ՄԿՈՒ վերաբերյալ տեղեկատվության տարածում	ՄԿՈՒ համակարգի գործունեության, ձեռք բերված արդ-յունքների և հետա-գա անելիքների վե-	Հանրապետական և մարզային մակարդակով իրականացվում է ԿԳՄՍ նախարարության հետ համաձայնեցված միջոցառումներ, իրականացվում են <<Համաշխարհային հմտություններ>>	Իրականացված է 6 միավոր աշխատանք, որոնց վերաբերյալ առկա են փաստացի նյութեր, տեսագրություններ:	տարվա ընթացքում՝ փուլերով, աշխատանքնե րի ավարտ՝	5696,0

		րաբերյալ շահագր-գիռ կողմերը ստա-ցել են անհրաժեշտ տեղեկատվություն: Նրանք ծանոթացել են նաև գործնական արդյունքներին:	մրցույթի ազգային փուլի անցկացման միջոցառումներ, մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով տրամադրվում են նյութեր:		դեկտեմբեր	
8	ՄԿՈՒ ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդակ ան երաշխավո-րությունների, ձեռնարկների մշակում և հրատարակում	Մշակել և հրատա-րակել սահմանված կարգին համապա-տասխան ընտրված ուսումնական ձեռ-նարկներ, մեթոդա-կան երաշխավորու-թյուններ, այլ ուսումնամեթոդա-կան նյութեր	ՈՒսումնական հաստա-տություններից ստաց-ված հայտերի, ԿԳՄՍ նախարարության, սոցիալական գործընկերների առաջարկությունների հիման վրա ընտրել մշակվող նյութերի ցանկը, քննարկել և հաս-տատել ԿԳՄՍ նախարարի հրամանով: Պատրաստել և հրատարակել նյութերը:	Մշակված և հրատարակված է 9 միավոր նյութ, որոնց վերաբերյալ առկա է դրական փորձագիտական եզրակացություն և ԿԳՄՍ նախարարի հրաման՝ դրանք գործածության երաշխավորելու մասին:	1. մշակման աշխատանք ների ավարտ՝ սեպտեմբեր, 2. հրատարակչ ական աշխատանք ներ և տպագրությո ւն՝ դեկտեմբերի ն	6165,0
9	ՄԿՈՒ որակավորումների կարողու-թենամետ չափորոշիչների և գնա-հատման չափանիշների վերանայում	Վերանայել ՄԿՈՒ որոշակի մասնագիտությունների և որակավորումների համար նախկինում մշակված պետական կրթական չափորոշիչը, մասնագիտության բնութագիրը և մասնագետի գնահատման չափանիշները	Վերլուծել կիրառված չափորոշչի վերաբերյալ ուսումնական հաստա-տությունների և գործա-տուների գնահատա-կանները, բացահայտել վերանայման հիմնական ուղղությունները: Ըստ վերլուծության արդյունք-ների ձևավորել մասնա-գիտության բնութագիրը, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլ-ների ցանկը, յուրաքան-չյուր մոդուլի ուսումնա-ռության արդյունքները և կատարման չափանիշնե-րը, ձևավորել ժամանա-կի բյուջեն ուսումնառու-թյան ամբողջ տևողու-թյան համար, ընտրել առանցքային հմտու-թյունները: Կազմել ՊԿՀ նոր նախագիծը՝ ներա-ռելով նաև ընդհանուր հումանիտար և սոցիալ տնտեսագիտական առարկաները: Ձևավորել մասնագետի գնահատ-ման չափանիշները:	Վերանայված է համապատասխան հիմնավորմամբ ընտրված, ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ՄԿՈՒ 22 մասնագիտությունների և որակավորումների համար պետական կրթական չափորոշիչներ, մասնագիտության բնութագրեր և մասնագետի գնահատման չափանիշներ: Այս փաստաթղթերի վերաբերյալ առկա է ՄԿՈՒՀԱԿ-ի դրական տեխնիկական փորձաքննության և համապատասխան ոլորտային հանձնաժողովի դրական բովանդակային փորձաքննության եզրակացությունները: Փաստաթղթերը մշակված են հաստատված ձևաչափերով:	Չափորոշիչներ ի առաջին խմբաքանակը՝ 10հատ, հուլիս Չափորոշիչներ ի երկրորդ խմբաքանակը՝ 12 հատ, հոկտեմբեր	25080,0

10	Վերանայված չափորոշիչների համապատասխան ուսումնական պլանների և մոդուլային ուսումնական ծրագրերի վերանայում	Հաստատված ձևաչափերով մշակել համապատասխան մասնագիտություն-ների և որակավորումների ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր	Վերլուծել տվյալ մասնա-գիտության պետական կրթական չափորոշիչը, բացահայտել ուսումնա-կան ծրագրերում ներառ-վող հարցերի շրջանակը, մոդուլների յուրաքանչյուր ուսումնառության արդյուն-քի համար մշակել գնա-հատման միջոց, որում պետք է ներառվի նաև տվյալ արդյունքի ուսուց-ման ծրագրային մանրա-մասները և առաջարկվի դրականի անցումային շեմը: Յուրաքանչյուր արդյունքի համար պետք է առաջարկվի նաև ուսուց-ման մեթոդաբանությունը, պահանջվող ռեսուրսները, ինչպես նաև տվյալ արդ-յունքին հատկացվող տեսական և գործնական ուսուցման ժամերը: Մշակվում է նաև ուսում-նական գործընթացի ժամանակացույցը՝ ըստ ուսումնական կիսամյակ-ների, կատարվում է պրակտիկաների տևողու-թյան բաշխում ըստ պրակտիկաների տեսակ-ների և ուսումնական կիսամյակների: Առաջարկվում է պետա-կան ամփոփիչ ատեստա-վորման ձևը և ընդգրկվող նյութի ծավալը:	Մշակված է ՄԿՈՒ 22 մասնագիտությունների և որակավորումների համար վերանայված և հաստատված ՊԿՁ-ներին համապատասխան ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր: Դրանց վերաբերյալ առկա է ՄԿՈՒՀԱԿ-ի դրական փորձագիտական եզրակացությունը: Մշակված փաստաթղթերը համապատասխանում են հաստատված ձևաչափին:	Վերանայված չափորոշիչներ ի առաջին խմբաքանակի համար մշակված ուսումնական պլան և մոդուլային ուսումնական ծրագրեր՝ 10հատ, սեպտեմբեր Վերանայված չափորոշիչներ ի երկրորդ խմբաքանակի համար մշակված ուսումնական պլան և մոդուլային ուսումնական ծրագրեր՝ 12 հատ, դեկտեմբեր	14630,0
11	Կարողութենամետ չափորոշիչներին համապատասխան ուսումնական գործընթացի մշտադիտարկում	Ըստ հաստատված հարցաշարի ուսումնական հաստատությունն-ե-րում դիտարկել ձեռք բերված արդյունքները	Ընտրել և ԿԳՄՍ նախարարության հետ համաձայնեցնել մշտադիտարկվող հաստատությունների ցանկը: Կազմել և սահ-մանված կարգով հաս-տատել մշտադիտարկ-ման հարցաշարը: Ընտրել և վերապատ-րաստել մշտադիտար-կում անցկացնող փորձագետներին: Կազմել և հաստատել մշտադիտարկման ժամանակացույցը:	Մշտադիտարկում է անցկացվել 42 ուսումնական հաստատություններում, որոնցից 24-ը գտնվում են մարզերում: Անց է կացվել նաև մանկավարժական աշխատողների վերապատրաստում: Առկա է մշտադիտարկումների վերաբերյալ հաշվետվությունները և վերապատրաստման մատյանները:	նոյեմբեր	3894,0
12	Նախնական մասնագիտական (արհեստագործակ	Հաստատված ծրագրով վերապատրաստել	Վերլուծել ՄԿՈՒ հաստա-տությունների վերաբեր-յալ առկա տեղեկատվու-թյունը, հաշվի առնել ԿԳՄՍ նախարարության	Վերապատրաստված են ՄԿՈՒ հաստատությունների առնվազն 40 ղեկավարներ՝ 2	հունիս	280,4

	ան) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների ղեկավարների վերապատրաստում	ՄԿՈՒ հաստատություն-ների ղեկավարների	առաջարկությունը և ձևավորել վերապատրաստման խմբերը: Մշակել և հաս-տատման ներկայացնել վերապատրաստման ծրագիրը: Ընտրել և հրահանգավորել վերապատրաստողնե-րին: Մշակել վերապատ-րաստման նյութերը: Կազմել վերապատրաստման ժամանակացույց:	խմբով: 1 խմբի վերապատրաստումն իրականացվում է մարզում: Դասընթացի վերաբերյալ առկա է պարապմունքների լրացված և վավերացված մատյանը:		
13	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմի վերապատրաստում	Հաստատված ծրագրով վերապատրաստել ՄԿՈՒ հաստատություն-ների մանկավարժական անձնակազմի աշխատողների, ուսումնական գործընթացի պատասխանատուների	Ամփոփել ՄԿՈՒ հաստա-տությունների ներկայաց-րած հայտերը ձևավորել վերապատրաստման խմբերը: Մշակել և հաս-տատման ներկայացնել վերապատրաստման ծրագիրը: Ընտրել և հրահանգավորել վերա-պատրաստողներին: Մշակել վերապատ-րաստման նյութերը: Կազմել վերապատրաստման ժամանակացույց:	Վերապատրաստված են ՄԿՈՒ հաստատությունների առնվազն 900 մանկավարժական աշխատողներ, ուսումնական գործընթացի պատասխանատուներ՝ 45 խմբով: 24 խմբի վերապատրաստումներն իրականացվել է մարզերում: Դասընթացների վերաբերյալ առկա է պարապմունքների լրացված և վավերացված մատյանը:	ապրիլ	6441,0
14	Չափորոշիչներ մշակող փորձա-գետների վերապատրաստում	Հաստատված ծրագրով վերապատրաստել չափորոշիչներ մշակող փորձագետների	Ձևավորել վերապատ-րաստման խումբը: Մշակել և հաստատման ներկայացնել վերապատ-րաստման ծրագիրը: Ընտրել և հրահանգավո-րել վերապատրաստող-ներին: Մշակել վերապատրաստման նյութերը: Կազմել վերապատրաստման ժամանակացույց:	Վերապատրաստված են չափորոշիչներ մշակող առնվազն 25 անձինք՝ 1 խմբով: Դասընթացի վերաբերյալ առկա է պարապմունքների լրացված և վավերացված մատյանը:	մայիս	109,0
15	ՄԿՈՒ հաստատությունների կառա-վարման խորհրդի անդամների վերապատրաստում	Հաստատված ծրագրով վերապատրաստել ՄԿՈՒ հաստատություն-ների կառավարման խորհրդի անդամների	Վերլուծել ՄԿՈՒ հաստա-տությունների վերաբեր-յալ առկա տեղեկատվու-թյունը, հաշվի առնել ԿԳՄՍ նախարարության առաջարկությունը և ձևավորել վերապատրաստման խմբերը: Մշակել և հաս-տատման ներկայացնել վերապատրաստման ծրագիրը: Ընտրել և հրահանգավորել վերա-պատրաստողներին: Մշակել վերապատ-րաստման նյութերը: Կազմել վերապատ-րաստման ժամանակացույց:	Վերապատրաստված են ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհրդի առնվազն 40 անդամներ՝ 2 խմբով: 1 խմբի վերապատրաստումն իրականացվում է մարզերում: Դասընթացի վերաբերյալ առկա է պարապմունքների լրացված և վավերացված մատյանը:	հոկտեմբեր	280,4
16	ՄԿՈՒԶԱԿ-ի ընթացիկ	ՄԿՈՒԶԱԿ-ի ստորաբաժանում-ները	ՄԿՈՒԶԱԿ-ի տարեկան պլանի կազմում, դրված պարտականությունների կատարման	Իրականացված աշխատանքների վերաբերյալ	Տարվա ընթացքում,	57361,4

	գործունեության կազմակերպման ապահովում	կատարում են իրենց կանոնադրական գործառույթները	գործընթացների կազմակերպում, ՄԿՈՒ համակարգի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, ամփոփում, մշակում: Տեխնիկական առաջադրանքների և օգտագործվող հրահանգների մշակում, վերապատրաստման ծրագրերի և նյութերի մշակում: Փորձաքննությունների իրականացում, սեմինարների կազմակերպում:	ձևավորված փաստաթղթեր, եզրակացություններ:	վերջնական ամփոփում՝ դեկտեմբեր	
				Ընդամենը		166 171, 2
				ԱԱՀ		33 234,2
				Ընդամենը		199 405,4

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005429
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Կրթության զարգացման նորարարական ազգային կենտրոն»հիմնադրամ
ք. Երևան, Տիգրան Մեծ 67
ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220303210078000
ՀՎՀՀ 02657678

Գործադիր տնօրենի ժ/պ՝

Digitally signed by TOROSYAN ARTASHES 1209620243
Date: 2023.01.26 17:34:15 AMT

_____ Ա.Թորոսյան
(ստորագրություն)

Կ.Տ.